

ԵՌԱՄՍԵԱՅ ՏԵՂԵԿԱԳԻՐ

” ԴՊՐԱՅ ԴԱՍՈՒ ”

Ամենապատիւ Գերպ. Տէր եւ Մեծապատիւ Տեարք .

Ինչպէս որ Ձեզ յուղարկուած հիմնական կանոնագրութեանէն, զոր անշուշտ կարգալու հանութիւնն ունեցած էք, յայտնի է, նորակազմ Դպրաց Դասուս համար այս օրս կրկին նշանակութիւն ունի, վասն զի իւր Պաշտպան Սրբոյն Տօնախմբութեանը հետ իրեն անդրանիկ հրապարակական համարատուութիւնն ընելու բարեպատեհ առիթը կ'ունենայ իբր Աստուծոյ Դպրաց Դասուս մեծ եւ անմոռանալի պատիւ մը կը համարիմ որ՝ ի դիմաց եւ յանուն Իրւանիս՝ ինձ վիճակած է՝ եւ այն ալ առաջին անգամ ըլլալու պայմանօք՝ համառօտ ուրուագծելու ընկերութեանս պատմականը եւ տալ հաշիւն իրեն գործառնութեանց :

Շարքիւս Եկեղեցիիս մեծաշուք հանդէսներն, արդիւնք Դպրաց Դասուս ջանից եւ զրամական զոհողութեանց, անշուշտ ինծի հետ Ձեզ եւս յիշեցուցին, Գերպ. Տէր եւ Մեծարոյ Տեարք, երբեմնի Հայ-գաթօլիք Դպրաց Դասերը, Ստուգիւ ալ առ մեզ առաջին անգամ Դպրաց Դաս հաստատուած է 1838 ին, ինչպէս որ գրուած է թղթակցութեան մը մէջ, զոր ցայսօր պահուած է Վիեննական Միւլթարեանց Մայր Վանուց Իրւանիս մէջ, եւ որուն ընդօրինակութիւնը քովս պահած եմ ինչո՞ւ սակայն հետուն երթանք. հոս իբր վկայ կեցած է մեր հիմնադրից եւ պատմական Յիսուս Փրկիչ Մայր Եկեղեցին, որուն քարերն անգամ կ'աղաղակեն մերազնէից փութկոտութիւնն, որոնք գունդադունդ Ս. Ստեփանոսի Նախավկային նախատօնակին կը փութկոտին Բերայի բարձունքներէն զէպ ի Ղալաթիա իջնալ՝ լսելու համար Դպրաց Դասուն «նէյլի» պատարագը եւ մանաւանդ Տիրացու Պապա Համբարձումն, որուն կենդանի վերջին աշկերտն՝ կարծեմ՝ Աւետիքական Ոստանին մէջ բազմած է Մեծին Միւլթարայ Աբբաշայրական Աթոռոյն վրայ : 1838էն մինչեւ 1850 թուականներն երթալու ենք գտնելու համար երկրորդ անգամ ծնունդ առած Դպրաց Դաս մը - թէ որոնց ձեռքք եւ ինչպիսի՞ պարագայից բերամբ այս թուականին Դպրաց Դաս հաստատուած եւ որչափ ժամանակ տեսած է, զփութարին է ինծի ճիշտ գաղափար մը յայտնել, քանի որ միակ խեցեք եւ կիսաւարտ կանոնագրութիւնէ մը զատ իբր յիշատակ քովս պահուած՝ ուրիշ բան չունիմ ձեռքս : Ինչ որ սակայն, Տեարք իմ, յայտնի է սա է, թէ տարիններու ընթացքին մէջ մեր մայրենի Եկեղեցւոյ հնաւանդ եւ հրաշունջ շարականաց երգեցողութիւնն այն աստիճան աղաւաղուեցաւ չորհիւ համբակ տիրացուաց, որ ազգ. ծանօթ խընդիրներէն մի քանի տարիներ յառաջ, որ է 1863ին, Հասուն Նախագահ Արքեպիսկոպոսը մասնախումբ մը կազմեց, եկեղեցական երգերը մի օրինակութեան վերածելու համար, թէ ինչ գործ ըրած է այս մասնախումբս, որուն կ'անդամակցէին Այտրենան, եւ Հիւրմիւզեան, չի գիտեմ, Ծանօթ է նաեւ սա ալ թէ՝ Հասարակութեանս մէջ եկեղեցական երգեցողութիւններն անդալապէս ցաւալի գրութեան մէջ թաւայեցան, այնպէս որ Մայրաքաղաքիս տանեակ Հայ-գաթօլիք եկեղեցիներուն մէջ միայն Ոսկերեան եկեղե-

ցին է, յորում չէնք չնոր՝ ձայներու հետքերը դեռ եւս մնացած են : Իրաց այս տխուր կացութեան դարման մ'ընելու համար էր որ ահա, Տեարք իմ, կազմուեցաւ արդի Դպրաց Դաս, որուն հիմնադիր եւ զայն կազմակերպող եւ գլուխ հանողն ալ Գերպ. Տ. Նիկողայոս Պաղչեանն է. Եկեղեցիիս Մեծաւոր ժողովրդապետ Վարդապետը Արդէն անցեալ տարուէն աչալիս գաղափար մը գոյութիւն ունէր, որ կրցաւ իրականութիւն դառնալ տարւոյ վերջերը միայն : Ընդ մեր շինած կանոնագրութեան, որուն դիտմամբ հիմնական անունը տուինք, որպէս զի ապագային անուակազոյն եղանակաւ կատարելագործենք, Հոգեւոր Տիրոջմէն եւ Վարչական Ժողովէն Հոկտ. Ալին հաստատուիլը, Եկեղեցիիս Թաղական Խորհուրդը կոչուած ընկելով մեր բարեաղակամ տրամադրութեան, կազմեց արդի Դպրաց Դասուս Իրւանք եւ աչալեւով գործունէութեան մը սկիզբն ըրինք, թէ եւ կը խոստովանիմ տակաւին գանգաղ է եւ անորոշ եղանակաւ : Ինչպէս ամէն նոր գործ, այսպէս ալ մեր Դպրաց Դասն է Տեարք իմ, ունեցաւ եւ դեռ ունի արտաքին եւ ներքին գիտարութիւններ, որոնց ասիւզուած է կուրծք տալ, արմատախիլ ընել կարենալու համար զեղծումներ, կանխակալ կարծիքներ եւ «ինչ ընենք այս ասանկի» դրութիւնը :

Պէտք չէ մոռնալ նաեւ, Տեարք, թէ Դպրաց Դասուն ուսոյ վրայ երկու բեռ կայ, Եկեղեցի եւ Դպրոց, որոնց երկուքին ալ հաւասարապէս պիտի հասնի եւ երկուքն ալ պիտի վերանորոգէ. չէն պահէ եւ պայծառացնէ Եկեղեցին տակաւ կը սկսի մեր ուզած գոյնն աւնուլ, տակաւ կ'ըսեմ, վասն զի զեռ բաւական չէ մեր ընել տուածը եւ ո՛չ ալ կատարեալ : Իրւանս արդէն իր կազմակերպութեան առջի օրէն կ'ուսումնասիրէ լաւագոյն Դպրաց Դաս մ'ունենալու եւ կազմելու միջոցները, Դպրաց Դաս մը որ բառին բուն նշանակութեամբը գիտակից ըլլայ իրեն վրայ գրուած յոյսերուն մեծութեան եւ հետեւի գիտակցօրէն մեր մայրենի Եկեղեցիին դարաւոր աւանդութեանց՝ ներշնչուելով այսու Պատրիարքական իշխանութիւնէ՝ Իրւանս հաւատք ունի թէ ընդ հուս պիտի յաջողի եւ ընդհանրութեան ներկայացընէ քննադատութիւնէ ազատ Դպրաց Դաս մը : - Գալով Դպրոցին, Իրւանս դեռ եւս ի վիճակի չէ գոհացուցիլ արդիւնք մը մատնանիլ ընելու : Տարակոյս չկայ թէ Իրւանս գոհ չէ եւ պէտք չէ որ ալ գոհ մնայ Ոսկերեանի դպրոցովը միայն, քանի որ իրեն սրբաղան նպատակներէն մին ալ իրեն խնամոյ յանձնուած աղքատիկ տղոց ապագան բարւոքել է : Գուցէ մեր այս հաստատուն եւ բարենպաստակ աւելնն ի նկատ աւնելով է որ Ս. Յակոբայ Անկելանոցին եւ Եկեղեցիիս մեղուալան Հոգաբարձու մարմինները պաշտօնապէս իրեն առաջարկած են երկու Դպրոցներ, որոնց ու բացարձակ անօրէնութեան ինչպէս իրեն քանակցութեանց աւարտիլը Իրւանս ինչպիսի ստանձնէ այդ միացեալ Դպրոցին, որ եւ ըստ իրեն գտնելիք ընդունալով, որոնք միադիր է զայն վերածել Արուսեան Դպրոցին : Դիտուած ըլլալով թէ ութիւններէ աւելի արուստ եւ հաց պէտք է մեր աղքատ «էմանֆ» զասակարգի տղոց : Պարզապէս այս դիտաւորութեամբ է որ հարկ եղած պաշտօնական ձեւակերպութիւնները Հոգեւոր Տիրոջ ձեռքք կատարել տալով, Իրւանս



ի մօտոյ պիտի կազմակերպէ Թատերական Հանգէս մ'ի նպաստ Դպրոցի :

Ուրախ եւ միանգամայն հպարտ եմ, ինչ որ ներելի է կարծեմ, յայտարարել կրնալուս համար թէ Դպրաց Դասուս Իրւանքին դրամական պիւտճէն գոհացուցիչ է : Արգարեւ ալ երեք ամսեայ կարճ ժամանակամիջոցիս մէջ ունեցած ենք 60է աւելի բաժանորդ անդամներ, որոնց ամսականներուն գումարն է 743, Եթէ այս գումարիս վրայ յաւելունք նաեւ ընդունած նուէրնիս որ է 720, գանձանակէ գոյացած 440 50, կունենանք ընդ ամենն 1903,50 դահեկան : Ելքերնիս միայն եղած է Դպրապետին, Դպրաց ամսականները, Կանոնագրութեան եւ հրախրանաց տոմսակներուն սպագրութիւնն ու այլ մանր ձեռքէ ծախքեր, որոնց համագումարն է 1303,50 : Ներկայապէս 668 դահեկան գրամ ունինք մեր դրամարկեղ մէջ, զոր ամէն ամիս անցընելու յոյս ունինք : Հոս յանուն Դպրաց Դասուս ի որտէ չնորակալութիւն եւ երախտագիտութիւն կը յայտնեմ Նուիրատու Տեարք մէջ ի մասնաւորի կը յիշատակեմ Պարոն Կամարականն, Ռուսական Հիւպատոս ի Դամասկոս, որ նուիրած է 3 գաղղ. ոսկի, ինչպէս նաեւ Դրէտի Լիոնէ Ա ոսկի եւ այլք, որոնք ի մասնաւորի իրենց անուան յիշատակուիլը չ'ուզեցին : Դպրոցի անուամբ ալ ընդունեցանք նուէրներ, որոնց գումարն ու տուողաց անուանք պիտի հրատարակուին շարքիւս մէջ ի լրագիրս : Այսպէս ուրեմն մեր զրամական պիւտճէն ներկայացընելէ վերջ Եկեղեցիիս Թաղական Խորհրդին եւ յետոյ Ամեն. Գերպ. Հոգեւոր Տիրոջ ձեռքք Վարչականին վաւերացման, պիտի կախել տանք զայն Եկեղեցիիս բանկալն ի գիտութիւն եւ ի քննութիւն, թէ եւ այսօրու իսկ փափաքողք կըլնան տեսնել մեր հաշուոց տուածը :

Ահաւասիկ, Տեարք իմ, Դպրաց Դասուս գործառնութեանց վիճակը Հոկտեմբերի 14էն մինչեւ այս օր : Իրւանս բացառութեան մը հետեւելով հրատարակեց իրեն Կանոնագրութիւնը. միջոյ մէջ չգործեցինք, հետեւաբար կը սպասենք իւրաքանչիւրին քննադատականին, ուսկից պիտի ներշնչուինք, քանի որ հասուն եւ անկոմիակալ ոգին որ եւ է մարմնոյ մը յարատեւութեան գրաւականն է :

Յաւարտ բանիցս, յանուն Իրւանքիս չորհակալութիւն կը յայտնեմ ներկայից եւ մանաւանդ Ձեզ, Գերապայծառ Տէր, որ զմեզ պատուել հաճեցաք եւ եղաք առաջինն մեր Եպիսկոպոսաց, որուն վիճակած է եղեր Դպրաց Դասուն տօնախմբութեան անդամնիկ Պատարագը մատուցանել, Հաճեցէք ուրեմն, խնդրեմ, մեր սրբիական զգածմանից Թարգման հանդիսանալ Ամեն. Հոգեւոր Տիրոջ քով, որ իբր իրեն երկրորդ եւր, Գերպ. Տէրութիւնդ յուղարկեց իրեն բացակայութիւնն անզգալի գործելու համար. երկայնաճիգ բանիւք պիտի չբացատրեմ այս բացակայութեան համար զգացածնիս, ըսէք սակայն, Գերպ. Տէր, մեր սիրելի Վեհին թէ ինքն է մեր քաջալիրիչ Զօրավիգն ու Պաշտպանն, որուն անշուշտ պիտի բարեհաճիք նաեւ Տեղակազիրս մատուցանել :

Ատենադպիր Դպրաց Դասու
ՅՈՎ. Յ. ԱԼԱՆ
Բերա, 28 Դեկտեմբերի, 1897

15200-11-10-102

15200-11-10-102

15200-11-10-102

15200-11-10-102

15200-11-10-102

15200-11-10-102

15200-11-10-102